ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59

«02» սեպտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ (ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ) 0027-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.06462 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 01-ի N186-Ն հրամանով հաստատված <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի>> 9-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ համայնքի վարչական սահմաններում 0027-0001-ից կադաստրային ծածկագրով 0.06462 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և թույլ տրված անճշտության հետևանքով այն համայնքին է փոխանցվել որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն, անճշտությունն ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում (Վահրամաբերդ բնակավայր) 0027-0001 կադաստրային ծածկագրից 0.06462 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել համայնքի սեփականություն:

2. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը

3. Համայքնի ղեկավար Կարեն Արշակյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ համայքնի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«02» սեպտեմբերի 2019 թվական

գյուղ Մայիսյան